տակով հարկաւոր է· 1) անել ընդհանուր զօրակոչ մինչև 45 տարեկանները, 2) կտրուկ քայլերով ապահովել դրամական միջոցները, 3) ռազմաճակատ ուղարկել մեր ուժերի մեծ մասը, 4) ապահովել Թիկունքը՝ մեր ձեռքն առնելով իշխանութիւնը Բաքուում և Գանձակում, որոնք գլխաւոր բանալիներն են և ամենակարեւոր կէտերը Թիկունքի:

Ազգ· Խորհուրդը, հանդամանօրէն քննելով ստեղծուած դրութիւնը և Թուրքերի բացայայտ թշնամական դիրքը՝ ընդառաջ գնաց դրուած հարցերին, յայտարարեց զօրաշարժ և մարտ 5-ին ընտրեց զերադոյն զինուորական մարմին՝ բաղկացած Վարդանից, գնդ·Բախտամեանից և գնդ·Ղազարեանից, որոնց դերն էր լինելու վարել տեղական ինքնապաշտպանութիւնը, զինուորական ուժերի մարդանքը, ղեկավարութիւնն ու փոխադրութիւնը ուրիշ վայրեր: Լուրջ մտահոգուած ժողովրդի ապահովութեան հարցով՝ Ազգ· Խորհուրդը աշխատում էր պատրաստ լինել ամէն անակնկալի առջև· նա տեսնում էր, որ Թուրքերը օրէցօր դառնում են սանձարձակ: Փաստեր ունէր իր ձեռքին, որ Թիֆլիսում կայացել էր Թուրք-վրացական դաշնի համաձայնութիւն, և վրացիները օգնում էին Թուրքերին:

Բաքւի հայերի համար անվիճելի էր, որ վրացիներն ու Թուրքերը Թիֆլիսում գործում էին համերաշխ և, հակարոլշևիկեան պայքարի անունով, նեղ ազգային շահեր էին հետապնդում: Այս հաստատում էր և մուսաւաթականների գործունէութիւնը Բաքուում ու գաւառներում, ուր մի կողմից նրանք ձգտում էին դրաւել իշխանութիւնը, միւս կողմից՝ քար ու քանդ անել հայկական շրջանները: Այսպէս, փետրուարին կոտորուեցին Արէշի 4 հայաբնակ գիւղերը, տեղահանուեց Խաչմազի և Լենքորանի բնակչութիւնը, ճըլնաժամային դարձաւ Ղուբայի հայութեան վիճակը: Մարտին Թուրքերը աւերեցին Շամախիի հայկական Թաղը և 20-25 հայ գիւղեր, որոնց մօտ 25,000 մերկ ու անօթի բնակիչները Թափուեցին Մազրա և միւս ռուսական գիւղերը: Շամախիի և Գեօքչայի հայ ազգաբնակութիւնը բոլորովին կարուեց արտաքին աշխարհից:

Այս առթիւ Ազգ·Խորհուրդը բազմաթիւ դիմումներ արաւ Մահմ·Ազգ· Խորհրդին և Մուսաւաթին, բայց ի զուր: Մուսաւաթը իր ծրագիրներն էր առաջ քշում և սուր ընդհարման մէջ էր բանուորական խորհրդի հետ, ուր, Սէյմի դումարումից յետոյ, ազդեցութիւնը բոլորովին անցել էր բոլշևիկների, յատկապէս, Շահումեանի և Զափարիձէի ձեռքը: Մուսաւաթը, յենուած «վայրի դիվիզիա»յի վրա, մեղադրում էր բանւ·խորհրդին ռուսական վեհապետական ձգտումների մէջ, աշխատում էր քշել «եկեւորներին» և պահանջում էր, որ իշխանութիւնը յանձնի «տեղական տարրին», այսինքն՝ Թուրքերին: Իր հերթին, բանւ· խորհուրդը մուսաւաթականներին ամբաստանում էր բէգ-կալւածատիրական, բուրժուական, հակայեղափոխական և համիսլամական մեղքերի մէջ: Կրքերը լարուեցին ծայր աստիճանի ու բախումը դարձաւ անխուսափելի: Փոթորիկը պայթեց մարտին:

Առիթը մի հասարակ դէպք էր· Թրքական «վայրի դիվիզիայի» զինուորների 120 հոգինոց գնուած մի խումբ եկել էր Բաքու Թուրք միլիոնա-